28 նոյեմբերի 2019 թվականի N 1711 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 1412-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի «Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի վերականգնման և բարեկավման ծրագրի շրջանակներում որոշ տարածքների, գույքային իրավունքի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» N 1412-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման 4.1-ին կետը «որոշման» բառից հետո լրացնել «N 1 հավելվածի» բառերով, իսկ «կետերում» բառից հետո լրացնել «և «Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ 38+450 - կմ 90+191 հատված» բաժնի 153.1-153.9-րդ, 408.1-408.12-րդ կետերում» բառերով.

2) որոշման N 1 հավելվածի «Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ 38+450 - կմ 90+191

հատված» բաժինը 153-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 153.1-153.9-րդ կետերով.

«

153.1	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0193-0009
153.2	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0194-0010
153.3	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0194-0016
153.4	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0193-0005
153.5	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0193-0006
153.6	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0194-0001
153.7	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0194-0009
153.8	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-193-0001
153.9	Լոռի	քաղ. Ալավերդի	06-002-0647-0001

».

3) որոշման N 1 հավելվածի «Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի կմ 38+450 - կմ 90+191 հատված» բաժինը 408-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 408.1-408.-րդ կետերով.

«

408.1	Լոռի	Օձուն	06-112-0437-0152
408.2	Լոռի	Օձուն	06-112-0437-0043
408.3	Լոռի	Օձուն	06-112-0437-0037
408.4	Լոռի	Օձուն	06-112-0437-0031
408.5	Լոռ	Օձուն	06-112-0437-0030
408.6	Լոռի	Օձուն	06-112-0437-0022
408.7	Լոռի	Օձուն	06-112-0437-0067
408.8	Լոռի	Օձուն	06-112-0437-0101
408.9	Լոռի	Օձուն	06-112-0437-0038

408.10	Լոռի	Օձուն	06-112-1096-0002
408.11	Լոռի	Օձուն	06-112-1097-0002
408.12	Լոռի	Օձուն	06-112-0438-0115

».

4) որոշման N 2 հավելվածի Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կմ 38+450 - կմ 90+191 հատվածի բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների օտարման գոտին շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 4
Երևան